

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2016

11-րդ դասարան

Ա. Աշխատանք բնագրով: (12 միավոր)

Թանկագին գորգով պատված գահավորակի վրա, որի երեք կողմերում դրված էին շքեղ կերպասներով պատված բարձեր, նստած էր մի երիտասարդ: Արևն արդեն բարձրացել էր մի քանի ասպարեզ, բայց նա ո՛չ լվացվել էր, ո՛չ հագնվել: Փաթաթված էր ասրյա մի վերարկուի մեջ, իսկ գիսակները մեղմ ալիքներով սփռվել էին թիկունքի վրա և երբեմն սքողում էին նրա գունաթափ դեմքը: Նրա անհանգիստ մատները անդադար ուղորում էին կարմրագույն շրթունքի նորաբույս ընչացքը: Սևորակ աչքերի մեջ նշմարվում էր մի անբացատրելի վրդովմունք: Քսաննահինգ տարեկան կլիներ: Մենյակը, որտեղ նստած էր նա, նրա ընդունարանն էր: Հատակը պատված էր բրդեղեն օթոցներով, անկյուններում դրված էին տեգեր, գեղարդներ, աշտեներ՝ բոլորը ոսկեհուռ դրվագներով ագուցված, կապարճ՝ լի նետերով, տապարներ՝ երկաթյա կոթով, երկսայրի սրեր, որոնց կոթերը զարդարված էին ականակուռ գոհարներով:

1. Բացատրե՛ք **ասպարեզ** բառի իմաստը: Նշե՛ք՝ ինչ ծագում ունի **ասպ** բառը: Նշված արմատով գրե՛ք երեք բառ և նշե՛ք իմաստները:
2. Բացատրե՛ք **ասրյա, աշտե, կապարճ** բառերի իմաստները:
3. Տեքստից դու՛րս գրեք երեք հնաբանություն:
4. **Ականակուռ** բառում բացատրե՛ք առաջին արմատի իմաստը և նույն արմատով կազմե՛ք երեք բառ:
5. Նշե՛ք՝ **սփռվել** և **սքողել** բառերում գրաբարյան որ նախդիրի հնչյունափոխված ձևն է առկա:
6. Նշե՛ք **ընչացք** բառի իմաստը և նրանում կատարված հնչյունափոխությունը:
7. Տեքստում որո՞նք են **դիպակ, ընդելուզվել** բառերի հոմանիշները:
8. Գրե՛ք **աչք** բառով կազմված շրջասությունը, որ նշանակում է **աստղ(եր)**:

Բ. Բացատրե՛ք՝ << Հիվանդ ոչխարն առողջ գազանից նախընտրել >> թևավոր խոսքի իմաստը և նշե՛ք՝ որտեղից է առաջացել: (3 միավոր)

Գ. Շարադրություն՝ «Կյանքի ուղորապտույտ ճանապարհներով» վերնագրով (երկու էջի սահմաններում) : (5 միավոր)